AZG NEW MSHAKUITT.QXD 02/05/2019 19:56 Page 4

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
պատմալեզուաբան

Լուսինէ Աւետիսեանի
Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը

Լուսինէ Աւետիսեանի աշխատութիւնը Հայաստանում արեւելահայերէնի դասական ուղղագրութիւնը կարգաւորելու արդի ժամանակների առաջին փորձերէն է. պեսական ու գիտաուսումնական բացթողութեան պայմաններում՝ խրախուսելի մի նախաձեռնութիւն:

Դասական ուղղագրութեան կանոնարկումը կարիք ունի իրօք լուրջ մօտեցման: Այսօր հնարաւոր չէ աչք փակել Հայաստանի գիտական ու հասարակական շրջանակներում աւելի ու աւելի տարածուող դասական ուղղագրութեան վրայ եւ աչքաթող անել մեր աւանդական ուղղագրութեան կանոնաւորումը: Դասական ուղղագրութեան ասպարէզում ներկայումս գոյութիւն ունի մի քանի ուղղութիւններ, սակայն գոյութիւն չունի համազգային մի մարմին, որն իր հեղինակաւոր կարծիքով ընդհանուր յայտարարի բերէ բոլոր կողմերին: Ուստի՝ Լուսինէ Աւետիսեանի աշխատութիւնը աւելի քան ողջունելի պէտք է համարել:

Աշխատութիւնը վերնագրած է «Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը», ենթավերնագրած՝ «Առաջնորդող սահմանումներ ի նպաստ դասական ուղղագրութեան կանոնարկման»: Նկատի առնելով, որ աշխատութիւնը մեծ տեղ է տալիս նաեւ օտար յատուկ անունների տառադարձմանը, սկզբէն իսկ ասենք, որ աւելորդ չէիր համարեր, եթէ ենթավերնագրի մէջ յիշատակուէր նաեւ հարցի այդ կէտը:

Մենք համամիտ ենք հեղինակին, թէ «Ուղղագրութիւնը մի եւ նոյնն է հայերէնի բոլոր լեզուավիճակների համար» (էջ 6): Հայոց լեզուի գրաւոր երեք տարբերակներն ալ կարիք ունին իսկապէս միասնական ուղղագրութեան, եւ միեւնոյն բառը շատ աւելի պատշաճ է ուղղագրած տեսնել միեւնոյն կերպարանքով եւ ընթերցողին այն ներկայացնել միեւնոյն «շաղիկով»: Հակառակ պարագայում՝ կը սերմանենք մի խառնաշփոթ, որը կը յանգեցնէ ընթերցողի օտարացմանը՝ հայ գրականութեան այս կամ այն հատուածի նկատմամբ:

Հեղինակը ճիշդ կը նշէ, որ ներկայ երկու ուղղագրութիւնները արհեստականօրէն իրար յարմարեցնելը չի կարող հարցի լուծում բերել (էջ 7): Պատճառների մասին երկար կարելի է խօսել:

«Հնարաւոր չէ եւ չի կարելի յարափոփոխ հնչաբանութեանը ուղղագրութեամբ հետեւել» (էջ 8): Ինչո՞ւ, որովհետեւ գրագէտ ընթերցողը գիրը կ'ընթերցէ «աչքերով», մի հայեացքով ընդգրկելով մի քանի բառ, երբեմն եւ ամբողջ նախադասութիւն: Գրագէտ ընթերցողը մտքի մէջ հաս առ հաս չի արտասաներ իւրաքանչիւր բառ, եւ ընթերցողին չի յուզեր բառի գրութեան ու արտասանութեան թուացեալ անհամապատասխանութիւնը: Ի հակառակէն՝ նրան խիստ կարեւոր է ամեն մի բառը տեսնել միտքս եւ ամենուր միակերպ ուղղագրած:

Շատ ճիշդ է նկատած, որ «պարտաւոր չենք մեր ուղղագրութիւնը յարմարեցնել նորայայտ ու այլահունչ անուններին» (էջ 8): Նորայայտ անուններն են, որ սովորաբար կը յարմարուին եղած ուղղագրութեանը, որի վառ ապացոյցն է մեզանում վերջին հազարամեակի՝ զանազան լեզուներէն եկած անունների ու նորայայտ բառերի ուղղագրութիւնը՝ բոլորը աւանդական ուղղագրութեան կանոնների համաձայն:

Լուսինէ Աւետիսեանը ճիշդ կը գնահատէ դասական ուղղագրութեան որոշիչ դերը հայոց լեզուի ամրապնդութեան հարցում: Նրա աշխատութիւնը կարծես մի նախաբաւիղ է՝ ազգային երկխօսութեան ու ուղղագրական խնդիրների վերջնական կանոնաւորման ճանապարհին:

Թէեւ ոմանց, յատկապէս հայոց լեզուի ուղղագրութեան պատմութեանը քաջահմուտ լեզուաբաններին, կարող են վանել հեղինակի այս կամ այն եզրակացութիւնները, մեր խորին համոզմունքն է, որ գիտական արժէք ներկայացնող բոլոր լուրջ կարծիքները գոյութեան իրաւունք պէտք է ունենան, եւ որ սովեսական «հակագիտական» պիտակաւորումները պէտք է իրենց տեղը զիջեն փոխյարգալից երկխօսութեանն ու անշահախնդիր դատողութեանը:

Լեզուաբանական հետազրքրքրական դիտարկումներէն է. «Առհասարակ, ըստ իս, հնչիւնափոխութեան ենթարկուում են ոչ թե երկբարբառները, այլ դրանք բաղադրող ձայնաւորը կամ կիսաձայնը» (էջ 15): Առաջին անգամն է, որ մենք կը տեսնենք այդպիսի ձեւակերպում: Լեզուաբաններին գուցէ այն հետաքրքրութեան մի նոր դուռ բանայ:

Հեղինակը մանրամասն կանգ է առել օտար յատուկ անունների տառադարձման կանոնարկումների վրայ: «Այսօր անհրաժեշտութիւն կայ յատուկ անունների ուղղագրութեան միօրինակացման» (էջ 40): Իրաւացի դիտարկում եւ յոյժ հրատապ, եթէ նկատի ունենանք մեր օրըստօրէ ընդլայնուող վիհը հայերէնի տարբեր վիճակների միջեւ:

«Պէտք է մեր լեզուի հնարաւորութիւններն օգտագործել՝ առաւելագոյնս անթերի արտացոլելու համար օտար անունները, բայց միաժամանակ չմեղանչել լեզուի արձանագրութեան համակարգի դէմ» (էջ 37): Զարմանալի կարող է թուիլ, որ ներկայ օրերում դեռեւս անհրաժեշտ է գիտնական հասարակութեանը յիշեցնել այդ հիմնարար օրէնքը: Տպաւոր՝ այս փաստը շատերը կ'անտեսեն:

«Կարելի է առաջարկել որդեգրել գերազանցապէս ընդունելի մեկ սկզբունք. յատուկ անունները հայերէնում ճիշտ է տառադարձել ըստ անուանատու ազգի լեզուական հնչիւնական առանձնայատկութիւնների» (էջ 40): Աւելացնենք. պայմանով, որ այդ լեզուն յայտնի լինի հայ գիտական հասարակութեանը եւ որ սիրուած չլինիք ամեն դէպքում ճշդելու փոխատու լեզուի ստուգաբանութիւնը: Հարցս խորքային է. աշխարհում մի քանի հազար լեզու կայ:

Հաճելի եւ ընդունելի է «մեկ» բառի ուղղագրութեան տրամաբանութիւնը. մի խնդիր, որ արդէն քանիցս արծարծել են հայ լեզուաբանները, սակայն որը ցայսօր լուծում չի գտել:

Բառասկզբի [յու] հնչման ուղղագրութիւնը: «Բառասկզբի փակ վանկում [յու] լսելիս պէտք է գրել կա՛մ «իւ», կա՛մ «եւ»...» (էջ 44): ... «Կայ եւ երրորդ տարբերակ՝ բառասկզբում գրառել «յու» եւ կարդալ հնչողէս «յունիս, յունուար» բառերում...» (անդ), այսինքն [հ] հնչմամբ: Կարելի է աւելացնել, որ հնարաւոր է նաեւ մի չորրորդ տարբերակ՝ գրել «յու» եւ կարդալ [յու]: Այսինքն՝ վերադառնալով մեր ուղղագրութեան սկզբնական տրամաբանութեանը՝ վճիռ կայացնել, որ «յ» տառը բառասկզբում ճակատագրօրէն միշտ չէ, որ [հ] պէտք է հնչի: Այս հարցի մասին կարելի է, եւ անհրաժեշտ է, խօսել: Եւ հենց դրանով է նաեւ արժէքաւոր աշխատութիւնը, քանզի այն վեր կը հանէ քննարկած նման խնդիրներ:

«Այսօր [վ] հնչիւնի ամրագրման երեք տարբերակները՝ «վ», «ւ», «ու», գուցէ համոզում են, թե ժամանակին երեք տարբեր հնչիւնների համար են կիրառուել դրանք» (էջ 48): Իսկապէս, երբ գրի կ'առնուի որեւէ լեզու առաջին անգամ, «զուարճութեան» համար մի հնչիւնին երկու տառ չեն հնարեր, դրա համար լուրջ պատճառներ պէտք է լինին: Սակայն այս հարցը թերեւս փակուած պէտք է համարել. հայ լեզուաբանութիւնը վաղուց այն արդէն ապացուցել է:

Հետաքրքրական է Ե. գլխի նիւթը՝ «թէ» եւ «եթէ» շաղկապների վերջի «ե» գրութեան վերաբերեալ: Կարելի է եզրակացնել, որ այդ շաղկապները «նախահար» կամ «շեշտահաղորդ» կոչուած, սեփական շեշտ չունեցող մասնիկներէն են, ուստի եւ՝ դրանց հնագոյն «թե, եթե» գրչութիւնը:

Գնահատելի է աշխատութեան ԻԲ. գլուխը՝ «Ստուգաբանութիւն եւ ուղղագրութիւն» վերնագրով: Յիրաւի, ոչ է ճշմարիտ ուղղագրութիւն առանց ստուգաբանութեան, եւ որքան ալ «պարզեցուած» (սովեսական) ուղղագրութիւնը պնդէ թէ ինքը հնչական է, իր իսկ բազմաթիւ կանոնները կը գան ապացուցելու, որ ամեն ուղղագրութեան մէջ ստուգաբանութեան չափանիշը շատ մեծ կշիռ ունի:

Յատկապէս գայթագղեց մեզ «Արմաւիր» տեղանուան ստուգաբանութիւնը: Մեր կողմէն ջրաղացին ջուր լցնելով աւելացնենք, որ այդ անուան սեռական հոլովը հին հայերէնում «Արմաւիրայ» էր, եւ եթէ նկատի ունենանք, որ նախագրային շրջանում շատ անունների ուղղական եւ սեռական հոլովները կը տարբերուէին միայն շեշտով, ապա միանգամայն հնարաւոր պէտք է համարել «Արմաւի՛րայ» (ուղղ.) / «Արմաւիրա՛յ» (սեռ.) զոյգը՝ յետագայ «-այ» վերջաւորութեան անկումով:

Բնականաբար բոլոր եզրակացութիւնների հետ չէ որ համաձայն կարող ենք լինել, սակայն ըստ էութեան դա է գիտական քննարկումների եւ մի վերջնական կարծիք կազմելու նախապայմանը:

Չենք կարող առանց յիշատակութեան անցնել այն կէտը, թէ «...աբեղեանական ուղղագրութիւնը առաւելապէս հնչական է» (էջ 6): Մեր անձնական մօտաւոր հաշուումներով, դասական (աւանդական) ուղղագրութիւնը մօտ 83%-ով հնչիւնական գրութիւն է, իսկ «պարզեցուածը» (սովեսական) ուղղագրութիւնը՝ 86,5%-ով: Այսինքն՝ երկու ուղղագրութիւններն ալ բաւական հեռու են կատարեալ հնչիւնական լինելէն: Նկատենք, որ հարիւրտոկոսանոց հնչիւնական գրութիւն չի կարող լինել, քանի որ ոչ մի այբուբեն արժանի չի համարեր գրութեամբ արտայայտել դիրքային բոլոր փոփոխութիւնների արտասանութիւնները. օրինակ՝ «անպայման» բառը լաւագոյն կը համարէ գրել «անպայման», քան «ամպայման»:



Թէեւ հեղինակը կը գրէ, որ 1922 թուականի «յեղաշրջումն իրականացնողը ժամանակի ականաւոր գիտականներից մեկն էր» (էջ 6) (նկատի ունի Մանուկ Աբեղեանին), աւելորդ չենք համարեր յիշեցնել, որ եթէ չլինէր Պօղոս Մակինցեանը, ուղղագրական ձեւափոխում այն ժամանակ հնարաւոր է որ չլինէր, եւ որ նա էր, որ Մանուկ Աբեղեանի առաջարկութիւններին առանց քննութեան օրէնքի ուժ տուաւ:

Ամփոփելով մեր համառօտ (եւ խիստ թերի) գրախօսութիւնը, կը ցանկանայինք նորէն ընդգծել Լուսինէ Աւետիսեանի աշխատանքի կարեւորութիւնը եւ հրատապութիւնը: Հայոց լեզուն կարիք ունի ուղղագրութեան վերանորոգման ու գրութեան միասնութեան, եւ այդ միասնութիւնը կարող է բերել միայն դասական, աւանդական ուղղագրութիւնը: «Պարզեցուածը», որը արդէն հարիւր տարի կը յաւակնէի դառնալու հայոց միակ ուղղագրութիւնը, այդպէս ալ մինչեւ օրս չկարողացաւ իրագործել իր վրայ դրած «բոլշեւիկեան» պարտականութիւնը, այն է՝ դառնալ համայն հայութեան միակ ուղղագրութիւն: Չկարողացաւ, որովհետեւ անշուշտ արժանի չէր դրան, որովհետեւ ուղղագրական վերաձեւումը հաւանութեան չէր արժանացել համազգային որեւէ մարմնի կողմէ, եւ որովհետեւ այն լի էր հնչիւնաբանական ու ստուգաբանական թերութիւններով: (*)

Ասացինք «թերի», քանզի նման հարցերը մեծածաւալ ու լուրջ աշխատութիւնների նիւթ են, եւ մի երկու էջի սահմաններում կարելի չէ գրախօսել այն վիթխարի ժառանգութիւնը, որ կը կոչուի «հայոց ուղղագրութիւն»:

**) Խմբագրության կողմից հիշեցնենք, որ նոր ուղղագրությունը նախքան որդեգրվելը լայն քննարկման չէր ներկայացվել ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ, մանավանդ, Սփյուռքում: Եվ հենց այս վերջին հանգամանքը նկատի ունենալով է մեծն Վահան Թեքեյանը 1923-ի գրել. «Արեւելահայ եղբայրները... տարօրինակ եղբայրներ են»:*



«Արեւմտահայերենը 21-րդ դարում: Մարտահրաւէրներ եւ նոր մոտեցումներ»

Մեկենասությամբ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական համայնքների բաժնի, Ֆրեզնոյի Կալիֆոռնիա պետհամալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել Պետրոս Տեր-Մաթոսյանի եւ Բարլոու Տեր-Մկրտչյանի համահեղինակությամբ վերոնշյալ խորագրով (Western Armenian in the 21st Century: Challenges and New Approaches) հատորը, որն առաջինն է այդ համալսարանում նորաստեղծ Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի նախաձեռնած մատենաշարի:

Հակառակ այն փաստին, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն արեւմտահայերենը դասել է վտանգված լեզուների շարքում, մի տասնյակից ավելի հայ լեզվաբաններ ու մանկավարժներ վերջին տարիներին զբաղվել են այն լավագույնս փոխանցելու հաջորդ սերունդներին՝ կիրառելով նորարարական մեթոդներ: Հատորում ի մի են բերված Հրաչ Ջիլինգարյանի, Անի Կարմիրյանի, Ջեսի Սիրական-Արլենի, Շուշան Կարապետյանի, Սիլվիա Գասպարյանի, Հակոբ Գյուլուզյանի եւ Էլիզաբեթ Մխիթարյանի նորարարական ցուցումներն ու մեթոդաբանական մոտեցումները: Քննարկված հարցերն են «Հայերեն մտածելու եւ ստեղծագործելու խնդիրները», «Սփյուռքում արեւմտահայերենը դասավանդելու նոր մեթոդները», «Մտորումներ երկրորդ գրական լեզուն ձեռք բերելու վերաբերյալ: Արեւելահայերեն խոսողները որպես արեւմտահայերենի հնարավոր սովորողներ», «Դասավանդման ընթացքում բազմալեզվական մոտեցումների կիրառումը», «Լեզվի կենսունակությունը ստեղծագործական գրագիտության միջոցով», «Մինչ ես բանաստեղծություն եմ ստեղծում, բանաստեղծությունն էլ ինձ է ստեղծում» եւ այլն: Նախաբանը գրել են Պետրոս Տեր-Մաթոսյանն ու Բարլոու Տեր-Մկրտչյանը, իսկ վերջաբանը կամ «Հետեւությունների փոխարեն» բաժինը՝ Վարդան Մաթեւոսյանը:

Տեր-Մաթոսյանը Լինկոլնի Նեբրասկա համալսարանում Մերձավոր Արեւելքի պատմության պրոֆեսորի օգնական դասախոս է եւ Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի (SAS) նախագահը, իսկ Տեր-Մկրտչյանը Կալիֆոռնիա պետհամալսարանի (Ֆրեզնո) Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենը եւ Հայկական ուսումնասիրությունների ծրագրերի համադրողը: Հ.Ծ.